

Ջեյ Լոնդոն

Գայլի որդին

Տղամարդը հազվադեպ է հասկանում թե որքան մեծ բան է իր համար մտերիմ կինը. համեմայն դեպս, նա կնոջը ինչպես հարկն է չի գնահատում, մինչև որ չի գրկվում ընտանիքից: Նա չի նկատում այն նուրբ, անտեսանելի ջերմությունը, որ կնոջ ներկայությամբ ստեղծվում է տանը. բայց հենց որ այն անհետանում է՝ նրա կյանքում դատարկություն է առաջանում, և նա անորոշ թախծում է ինչ-որ բանի համար, ինքն էլ չիմանալով, թե ինչի պակաս է զգում: Եթե նրա ընկերները ավելի փորձառու չեն, քան ինքը, ապա նրանք կասկածանքով գլուխները կօրորեն ու կսկսեն նրա որովայնը լցնել ուժեղ ներգործող դեղերով: Բայց քաղցը չի անցնում, ընդհակառակը, ավելի սաստիկ է տանջում, մարդ կորցնում է ճաշակը սովորական, առօրյա գոյության նկատմամբ, դառնում է խոժոռ ու մռայլ, և ահա մի գեղեցիկ օր, երբ ներսը կրծող դատարկությունը անտանելի է դառնում, նա վերջապես կռահում է:

Երբ Յուքոնում է այդպիսի բան պատահում մարդու հետ, նա սովորաբար նավակն է գործի դնում, եթե դա տեղի է ունենում ամռանը, իսկ ձմռանը լծում է իր շները և սլանում դեպի հարավ: Մի քանի ամիս անց, եթե նա սիրահարված է Հյուսիսին, այստեղ է վերադառնում կնոջ հետ, որը ստիպված է նրա հետ կիսել այդ ցուրտ երկրամասի նկատմամբ տածած սերը, ինչպես նաև բոլոր դժվարություններն ու չարչարանքները: Ահա զուտ սողամարդկային եսասիրության մի ավելորդ ապացույց: Եվ այստեղ ակամայից հիշում են մի դեպք, որը կատարվել է Բիրյուկ Մաքենզիի հետ այն հեռավոր ժամանակներում, երբ Զլոնդայկը դեռ ոսկու տենդ ու չեչակոների¹ ասպատակություն չէր տեսել և հայտնի էր միայն որպես մի վայր, որտեղ կարելի էր հիանալի կերպով սաղմոն որսալ:

Բիրյուկ Մաքենզիի մեջ առաջին հայացքից կարելի էր տեսնել ռահվիրայի, հողեր յուրացնողի: Նրա դեմքի վրա իրենց դորձմն էին դրել բնության ահեղ ուժերի դեմ մղած անդուլ պայքարի քսանհինգ տարիները. և ամենաձանրը եղել էին վերջին երկու տարիները, որ նա անցկացրել էր Բևեռային շրջագծի ծածկոցի տակ թաքնված ոսկին որոնելով: Երբ դատարկության կրծող զգացումը տիրեց Բիրյուկին, նա չզարմացավ, քանի որ գործնական մարդ էր և իր կյանքում արդեն հանդիպել էր նույն ցավով տառապող մարդկանց: Բայց նա ոչնչով ցույց չտվեց իր հիվանդությունը, այլ միայն սկսեց ավելի կատաղորեն աշխատել: Նա ամբողջ ամառ կռվեց մլակների դեմ և ապագա հանույթին համապատասխան հանդերձանք ձեռք բերելով, ոսկեբեր ավազի վլացումով զբաղվեց Սթյուարտ գետի ստորին հոսանքում: Հետո մեծ գերաններից լաստ սարքեց, Յուքոնով իջավ մինչև Քառասուներորդ Մղոնը և մի հիանալի տնակ կառուցեց իր համար: Դա այնքան ամուր ու հաճելի տուն էր, որ շատերը ցանկացան այն բաժանել Բիրյուկի հետ: Բայց նա զարմանալիորեն հակիրճ ու արտահայտիչ մի քանի խոսքով փշրեց նրանց հույսերը և մոտակա ֆակտորիայում պարենամթերքի կրկնակի պաշար գնեց:

Ինչպես արդեն ասացինք, Մաքենզին գործնական մարդ էր: Սովորաբար, որևէ բան ցանկանալիս, նա հասնում էր իր ուզածին, ընդ որում, հնարավորության սահմաններում, չէր դավաճանում իր սովորություններին ու չէր շեղվում իր ճանապարհից: Ծանր աշխատանքն ու վարձությունները նորություն չէին Բիրյուկի համար, սակայն բոլորովին էլ հաճելի չէր շնասահնակով վեց հարյուր մղոն անցնել սառցի վրայով, այնուհետև երկու հազար մղոն կտրել օվկիանոսով և, վերջապես, էլի մի հազար մղոն գնալ մինչև այն վայրերը, ուր ինքը նախկինում ապրել էր, և այդ բոլորը սոսկ հանուն այն բանի, որ կին գտնի իր համար: Կյանքը շատ կարճատև է: Այդ պատճառով էլ նա լծեց իր շներին, մի փոքր անսովոր բեռ կապեց սահնակին և շարժվեց այն լեռնաշղթայի ուղղությամբ, որի արևմտյան լանջերից սկիզբ է առնում Թանանա գետը:

Նա չէր հոգնում ճանապարհին, իսկ նրա շները Յուքոնում համարվում էին ամենատոկուն, ամենաարագավազ և սակավապահանջ լծվածքը: Եվ երեք շաբաթ անց նա հայտնվեց Թանանայի վերին հոսանքում ապրող սթիքս ցեղի բնակատեղում: Նրան տեսնելով՝ ամբողջ ցեղը զարմացավ: Թանանայի վերին հոսանքի սթիքսերի մասին վատ լուրեր էին պտտվում. նրանք մեկ անգամ չէ, որ սպիտակամորթի էին սպանել այնպիսի դատարկ բանի համար, ինչպիսին են սուր

¹ Չեչակո – նորեկ:

կացինը կամ կոտրված հրացանը: Բայց Բիրյուկ Մաքենզին նրանց մոտ եկավ մենակ, ու նրա ամբողջ վարվեցողության մեջ հեզության, անբռնազբոսիկության, սառնասրտության և անկատկառության հմայիչ խառնուրդ կար: Հարկավոր է մեծ արվեստ և վայրենու հոգեբանության խոր հմացություն ունենալ այդքան բազմազան գեներացի հաջողությամբ օգտվելու համար, բայց Մաքենզին այդ գործերում մեծ վարպետ էր ու լավ գիտեր, թե երբ պետք է հաճոյանալ և երբ շանթ ու որոտ արձակել:

Ամենից առաջ նա իր հարգանքը հավաստեց ցեղի առաջնորդ Թինգ-Թինեհին, մի քանի ֆունտ սև թեյ ու ծխախոտ մատուցեց նրան և այդպիսով նվաճեց նրա բարյացակամությունը: Այնուհետև ծանոթություն հաստատեց ցեղի տղամարդկանց ու աղջիկների հետ և նույն երեկոյան փոթլաչ² տվեց նրանց համար: Դոփոդփունով մոտ հարյուր ոտնաչափ երկարությամբ ու քսանհինգ ոտնաչափ լայնությամբ մի ձվաձև հրապարակ բացվեց ձյան մեջ: Մեջտեղում մի հսկայական խարույկ վառեցին, իսկ շուրջը փռեցին եղևնաճյուղեր: Ամբողջ ցեղը դուրս թափվեց վիզվամներից, և մի հարյուր կոկորդ հնդկացիական երգ երգեց ի պատիվ հյուրի:

Այդ երկու տարվա ընթացքում Բիրյուկ Մաքենզին սովորել էր հնդկացիների լեզուն՝ հիշողության մեջ պահել էր մի քանի հարյուր բառ, հաղթահարել կոկորդային հնչյունները, արտասովոր ձևերն ու դարձվածքները, մեծարանքի արտահայտությունները, մասնիկներն ու նախածանցները: Եվ ահա նա սկսեց ճառ ասել, նմանեցնելով նրանց նախնադարյան պոեզիայով հարուստ լեզվին, շռայլորեն օգտագործելով գոեհիկ գեղեցկություններ, կոպիտ այլաբանություններ: Թինգ-Թինեհը և շամանը նրան պատասխանեցին նույն ոճով, հետո նա փոքրիկ նվերներ տվեց տղամարդկանց, նրանց հետ միասին երգեց և իրեն որպես հմուտ խաղացող դրսևորեց նրանց սիրելի «հիսուներկու» մոլի խաղում:

Եվ այսպես, հնդկացիները ծխում էին նրա ծխախոտն ու շատ գոհ էին: Սակայն ցեղի երիտասարդությունը իրեն ուրիշ կերպ էր պահում, այստեղ զգացվում էր և մարտակոչ, և պարծենկոտություն: Եվ դժվար չէր հասկանալ, թե բանն ինչումն է. բավական էր լսել ջահել աղջիկների քմծիծաղը և անատամ պառավների կոպիտ ակնարկները: Ճիշտ է, նրանք այնքան էլ շատ սպիտակամորթների՝ Գայլորդիների չէին տեսել, բայց այդ քչերն էլ որոշ դաս տվել էին նրանց:

Բիրյուկ Մաքենզին, իր կարծեցյալ անհոգությամբ հանդերձ, շատ լավ նկատում էր այդ բանը: Ճիշտն ասած, գիշերը, քնապարկի մեջ մտնելով, նա մեկ անգամ ևս ամեն ինչ ծանր ու թեթև արեց, կշռադատեց մեծագույն լրջությամբ և շատ անգամ լցրեց ծխամորձը՝ անելիքների պլանը մշակելով: Բոլոր աղջիկներից միայն մեկը գրավեց նրա ուշադրությունը, և ոչ թե պատահական մեկը, այլ ինքը Չարինկան՝ առաջնորդի դուստրը: Նա խիստ աչքի էր ընկնում իր ցեղի աղջիկների մեջ. նրա դիմագծերը, կազմվածքը, կեցվածքը շատ էին համապատասխանում սպիտակամորթի՝ գեղեցկության պատկերացումներին: Ինքը ձեռք կրերի այդ աղջկան, նրան կդարձնի իր կինը և կանվանի... այո, կանվանի Գերտրուդ: Այս որոշմանը հանգելով, Մաքենզին՝ հաղթողների տոհմի իսկական որդին, շրջվեց կողքի վրա ու քնեց:

Դա դժվարին խնդիր էր և ժամանակ ու ջանք էր պահանջում, բայց Բիրյուկ Մաքենզին գործում էր խորամանկորեն, ընդ որում այնքան անվրդով տեսքով, որ բոլորովին շփոթեցնում էր հնդկացիներին: Նա աշխատեց տղամարդկանց ապացուցել, որ ինքը հրաշալի հրաձիգ է ու աննման որսորդ, և բոլոր բնակիչները ծափահարեցին նրան, երբ նա վեց հարյուր յարդ հեռավորությունից արձակած գնդակով ցած գցեց իշայծյամին: Մի անգամ երեկոյան նա առաջնորդ Թինգ-Թինեհին այցելեց իշայծյամի ու եղջերվի մորթիներից պատրաստված նրա վիզվամում, շատ պարծեցավ ու ծխախոտ չխնայեց: Նա առիթը բաց չթողեց նույն պատիվը տալու նաև շամանին. Մաքենզին շատ լավ գիտեր, թե ցեղն ինչպես է հաշվի նստում կախարհի խոսքի հետ, և անպայման ուզում էր նրա աջակցությունը ստանալ: Բայց այս պատկառելի մարդը չափազանց գոռոզ պահեց իրեն, չկամեցավ գայլույթը փոխել գթասրտության, և Մաքենզին նրան հաստատապես մտցրեց ապագա հակառակորդների ցուցակի մեջ:

Չարինկայի հետ խոսելու առիթ չէր ներկայանում, բայց Մաքենզին անընդհատ նայում էր նրան, հասկացնել տալով, թե ինչ մտադրություն ունի ինքը: Եվ աղջիկը, իհարկե, շատ լավ հասկացավ նրան, բայց երբ տղամարդիկ հեռու էին լինում, և Բիրյուկը, առիթից օգտվելով, կարող էր մոտենալ նրան, աղջիկը, կոկետություն անելով, իրեն շրջապատում էր կանանց խմբով, Բիրյուկը չէր շտապում, ըստ որում նա գիտեր, որ աղջիկն ականա իր մասին է մտածում. թող ուրեմն մի երկու օր էլ մտածի, դա միայն իր օգտին է:

² Փոթլաչ – խնջույք, որի ժամանակ տերը նվերներ է բաժանում հյուրերին:

Վերջապես մի օր երեկոյան նա որոշեց, որ արդեն գործի անցնելու ժամանակն է: Հանկարծ վեր կենալով, նա դուրս եկավ առաջնորդի խեղդուկ, ծխով լցված տնից և արագ քայլերով մտավ հարևան վիզվամբ: Չարինկան սովորականի նման շրջապատված էր կանանցով ու ջահել աղջիկներով: Նրանք բոլորն էլ զբաղված էին գործով. մոքասիներ էին կարում կամ ուլունքներ շարում հագուստի վրա: Մաքենգին դիմավորեցին պոռթկացող ծիծաղով, նրան և Չարինկային ուղղված կատակներ արեցին, բայց Մաքենգին առանց քաշվելու կանանց իրար հետևից դուրս շարտեց վիզվամբից ուղղակի ձյան վրա, ու նրանք ցրվեցին բնակատեղիով մեկ, որպեսզի բոլորին պատմեն միջադեպի մասին:

Մաքենգին իր ասելիքը շատ համոզիչ կերպով շարադրեց Չարինկային՝ նրա մայրենի լեզվով (աղջիկը Մաքենգիի լեզուն չգիտեր) և մի երկու ժամ հետո պատրաստվեց գնալու:

– Ուրեմն, Չարինկան կգնա՞ ապրելու սպիտակամորթի վիզվամբ: Լավ: Հիմա ես կխոսեմ հորդ հետ, միգուցե նա չի համաձայնվի: Ես շատ նվերներ կտամ նրան, բայց թող ավելին չուզի: Ասում ես՝ եթե հանկարծ «չէ» ասի՞: Ի՛նչ արած, լավ: Միևնույն է, Չարինկան կգնա սպիտակամորթի վիզվամբ:

Նա արդեն բարձրացրել էր մորթին, որով վարագուրված էր մուտքը, բայց այդ պահին աղջիկը ցածր ձայնով կանչեց նրան, և նա անմիջապես ետ դարձավ: Աղջիկը չոքեց հատակին փռված արջամորթու վրա. նրա դեմքը շողում էր այն լույսով, որով լուսավորվում են Եվայի իսկական դուստրերի դեմքերը. նա երկչոտությամբ քանդեց Մաքենգիի ծանր գոտին: Բիրյուկը տարակուսանքով նայում էր նրան, երկյուղով ունկնդրելով դրսից լսվող ամեն մի շրշուկ: Բայց աղջկա հաջորդ շարժումը ցրեց նրա կասկածանքները, և նա, իրեն շոյված զգալով, ժպտաց: Աղջիկը իր ձեռագործների տոպրակից հանեց իշայծյամի մորթուց կարված մի պատյան, որի վրա ուլունքով ասեղնագործված էին երևակայական վառ զարդանախշեր: Դուրս քաշեց Մաքենգիի որսորդական մեծ դանակը, արժանապատվությամբ նայեց սուր սայրին ու դրեց նոր պատյանի մեջ: Հետո այն հագցրեց գոտու վրա և քաշեց իր սովորական տեղը՝ ձախ ազդրի մոտ:

Դա, իսկապես, նման էր հնադարյան տեսարանի՝ աղջիկն ու նրա ասպետը: Մաքենգին աղջկան կանգնեցրեց ու բեղերը հպեց նրա ալ շուրթերին. դա աղջկա համար անծանոթ, խորթ փաղաքշանք էր, Գայլի փաղաքշանք: Այսպես քարե դարը հանդիպեց պողպատե դարին:

Երբ Բիրյուկ Մաքենգին, մեծ կապոցը թևի տակ դրած, նորից հայտնվեց Թլինգ-Թինեհի վրանի շենքին, շուրջը արտասովոր աշխուժություն էր զգացվում: Երեխաները վազվզում էին բնակատեղիով մեկ, ցախ ու խռիվ բերում փոթլաչի համար. կանանց խոսակցությունը դարձավ բարձրաձայն, երիտասարդ որսորդները խուճ-խուճ հավաքվում էին ու մռայլադեմ խոսք փոխանակում, իսկ շամանի տնից կախարդանքի չարագուշակ ձայներ էին լսվում:

Առաջնորդը նստած էր կնոջ հետ, որն անկենդան, սառած աչքերով նայում էր ուղիղ իր առջև, բայց Մաքենգին անմիջապես հասկացավ, որ այն, ինչ ինքն ուզում էր ասել, այստեղ արդեն հայտնի է: Նա ուլունքներով ասեղնագործված պատյանը փոխադրեց ամենաաչքի ընկնող տեղը՝ ի նշան այն բանի, որ նշանադրությունն արդեն ավարտվել է, և անմիջապես գործի անցավ:

– Ով Թլինգ-Թինեհ, հզոր տիրակալ սթիքսերի ցեղի և ամենայն Թանանա երկրի, իշխան սաղմոնի ու արջի, իշայծյամի ու եղջերվի: Սպիտակ մարդուն քեզ մոտ բերել է մեծ նպատակը: Արդեն շատ լուսիններ նրա տունը դատարկ է, և նա մենակ է: Նրա սիրտը թախծում է լուռության մեջ ու տանջվում կնոջ համար. թող կինը տան մեջ նստի նրա կողքին, թող դիմավորի նրան որսից վերադառնալիս, կրակ վառի օջախում ու կերակուր պատրաստի: Սպիտակ մարդուն տարօրինակ բաներ են թվացել, նա փոքրիկ մոքասիների թփթփոց ու երեխաների ձայներ է լսել: Ու մի գիշեր էլ տեսիլք է երևացել նրան: Ագռավը՝ քո նախահայրը, մեծն Ագռավը, սթիքսերի ցեղի հայրը հայտնվեց նրան ու խոսեց հետը: Ահա թե ինչ ասաց Ագռավը միայնակ սպիտակ մարդուն... «Հազիր մոքասիներդ ու կանգնիր դահուկների վրա, ու սահնակդ բեռնիր երկար ճամփաների համար անհրաժեշտ մթերքով և առաջնորդ Թլինգ-Թինեհի համար նախատեսված ճոխ նվերներով, քանի որ դու պետք է դեմքդ դարձնես այն կողմը, որտեղ աշխարհի եզրին թաքնված է զարնանային արևը, ու ճանապարհ ընկնես այն երկիրը, որտեղ որս է անում մեծն Թլինգ-Թինեհը: Այնտեղ կտանես առատ նվերներ, և իմ որդին՝ Թլինգ-Թինեհը, քեզ համար հայր կդառնա: Նրա վիզվամբում կա մի աղջիկ, որին ես կյանքի շունչ եմ ներարկել քեզ համար: Այդ աղջկան կնության կառնես»: Օ՛ առաջնորդ, այսպես ասաց մեծն Ագռավը: Ահա թե ինչու ես այս նվերները դնում եմ քո ոտքերի տակ: Ահա թե ինչու եկել եմ կնության առնելու քո դստերը:

Ծեր առաջնորդը արքայական շարժումով ավելի կիպ փաթաթվեց իր մորթեղեն հագուստի մեջ, բայց ուշացնում էր պատասխանը: Այդ միջոցին վրան մտավ մի փոքրիկ տղա, հաղորդեց, որ ցեղի խորհուրդը սպասում է առաջնորդին, և անմիջապես անհետացավ:

– Ով սպիտակ մարդ, որին մենք անվանեցինք Իշայծյամի Սարսափ, որը հայտնի է նաև Գայլ կամ Գայլի որդի անունով: Գիտենք, դու սերում ես մեծ ցեղից. մենք հպարտ ենք, որ մեր հյուրը եղար, բայց կետան³ հարմար զույգ չէ սաղմոնի համար: Այդպես էլ Գայլը հարմար զույգ չէ Ագռավի համար:

– Ճիշտ չէ՞, – բացականչեց Մաքենգին:– Ես Ագռավի դուստրերին հանդիպել եմ Գայլի ճամբարներում՝ Մորթիմերի, Տրեժիդգոյի, Բերնեբի մոտ. նրա տունը սքվո⁴ մտավ երկու սառցահոսք առաջ: Եվ ես լսել եմ, որ ուրիշներ էլ կան, թեև նրանց սեփական աչքով չեմ տեսել:

– Դու ճիշտ ես ասում, որդիս, բայց դրանք վատ ամուսնություններ են. նույնն է թե՛ ջրի ամուսնությունը ավազի հետ, ծյունափաթիլինը՝ արևի հետ: Իսկ դու հանդիպել⁵ ես Մեյսոն անունով մարդու և նրա սքվոյին: Ո՞չ: Նա Գայլերից առաջինն էր, որ այստեղ եկավ տասը սառցահոսք առաջ: Նրա հետ եկել էր մի հսկա, գրիզի արջի պես ուժեղ և ուռենու շիվի պես սլացիկ, սիրտը ոնց որ լիալուսինը ամռանը: Այ հենց նրան...

– Դա Մեյլյուրթ Զիդն է, – ընդհատեց Մաքենգին, նկարագրությունից ճանաչելով Յյուսիսում բոլորին քաջ հայտնի անձնավորությանը:

– Հսկան հենց նա է: Բայց դու երբևէ տեսե՞լ ես Մեյսոնի սքվոյին: Նա Չարինկայի հարազատ քույրն է:

– Ոչ, առաջնորդ, ես նրան չեմ տեսել, բայց նրա մասին լսել եմ: Հեռու-հեռավոր Յյուսիսում տարիների ծանրության տակ տապալվել է դարավոր սոճին և, ընկնելիս, սպանել Մեյսոնին: Բայց նրա սերը մեծ է եղել, և շատ ոսկի է ունեցել նա: Կինը վերցրել է ոսկին, վերցրել է որդուն, որ Մեյսոնն է թողել նրան, ու ճանապարհ ընկել, և անհամար չվերթներից հետո հասել է այն երկիրը, որտեղ ձմռանն էլ արև է շողում... Այնտեղ էլ նա ապրում է մինչև հիմա, այնտեղ չկան դաժան սառնամանիքներ, չկա ձյուն, ամռան կեսգիշերներին արևը չի լուսավորում, իսկ ձմռանը կեսօրին խավարը չի տիրում:

Այստեղ նրանց ընդհատեց երկրորդ սուրհանդակը և ասաց, որ խորհուրդը պահանջում է առաջնորդին: Նրան դուրս շարտելով ձյան մեջ, Մաքենգին թռուցիկ կերպով նկատեց, որ մարդիկ են շարժվում կրակի շուրջը, որտեղ ցեղի խորհուրդն էր հավաքվել, լսեց տղամարդկանց ցածրաձայն համաչափ երգը ու հասկացավ, որ շամանը զայրույթ է բորբոքում ցեղի մարդկանց մեջ: Ժամանակը չէր սպասում: Մաքենգին դարձավ դեպի առաջնորդը.

– Լսիր, – ասաց նա:– Ես ուզում եմ աղջկանդ կնության առնել: Նայիր՝ ահա ծխախոտ, ահա թեյ, շատ աման շաքար, ահա տաք վերմակներ ու մեծ, ամուր թաշկինակներ, ահա և իսկական հրացան, ու վրան էլ շատ փամփուշտ ու շատ վառող:

– Ոչ, – առարկեց ծերունին, աշխատելով անձնատուր չլինել իր առջև փռված հսկայական հարստության հրապուրանքին:– Հիմա իմ ցեղը հավաքվել է խորհրդի: Նա չի կամենա, որ ես Չարինկային տամ քեզ:

– Բայց առաջնորդը դու ես:

– Այո, բայց մեր երիտասարդները խիստ զայրացած են, որովհետև Գայլերը խլում են նրանց հարսնացուներին:

– Լսի՛ր, Թլինգ-Թինեհ: Նախքան այս գիշերը ցերեկ կդառնա, Գայլը իր շներին կքշի դեպի Արևելյան լեռները և ավելի հեռու՝ դեպի Յուրոն: Եվ Չարինկան ճանապարհ կբացի նրա շների համար:

– Բայց զուցե նախքան այս գիշերը կհասնի իր կեսին, իմ ջահելները Գայլի միսը կգցեն շների առաջ, ու նրա ոսկորները ձյան տակ կման, մինչև որ ձյունը հալվի գարնան արևից:

Սպառնալիք՝ ի պատասխան սպառնալիքի:

Մաքենգիի բրոնզագույն թուխ դեմքը շառագունեց: Նա ձայնը բարձրացրեց: Առաջնորդի պառավ կինը, որ մինչ այդ անտարբեր դիտողի դերում էր, փորձեց նրա մոտով կամացուկ անցնել դեպի

³ Ձկան տեսակ:

⁴ Սքվո – կին (հյուսիսամերիկյան հնդկացիների լեզվով):

դուռը: Երգը ընդհատվեց, լսվեց բազմաթիվ ձայների աղմուկ, Մաքենզին կոպտորեն պառնալին գցեց իր մորթեղեն անկողնու վրա:

– Ես նորից եմ դիմում քեզ, լսիր, ով Թիևզ-Թիևեհ: Գայլը մեռնում է՝ ծնոսները սեղմած, և նրա հետ մեկտեղ հավիտյան կքնեն քո ցեղի տասը ամենաուժեղ տղամարդիկ, իսկ տղամարդկանց կարիք շատ կլինի, որսի շրջանը նոր է բացվում և շատ լուսին չի մնացել, միևնույն ձևով որսի սկսվելը: Եվ ի՞նչ օգուտ կստանաս դու իմ մեռնելուց: Ես գիտեմ քո ժողովրդի սովորությունները. իմ հարստությունից քեզ քիչ բաժին կընկնի: Տուր ինձ քո աղջկան, և ամեն ինչ կմնա միայն քեզ: Մի բան էլ ասեմ քեզ՝ այստեղ կգան իմ եղբայրները. նրանք շատ են և անկուշտ են. և Ագռավի դուստրերը երեխաներ կծննդաբերեն Գայլի տներում: Իմ ցեղը քոնից ուժեղ է: Տուր ինձ աղջկադ, և այս ամբողջ հարստությունը քոնն է:

Դրսում ձյունը ճռճռաց մոքասիներն տակ: Մաքենզին ուսից ցած բերեց հրացանը և բացեց գոտկից կախված երկու ասորճանակների պատյանները:

– Տո՛ւր, ով Թիևզ-Թիևեհ:

– Բայց իմ ժողովուրդը «ոչ» կասի:

– Տուր, և այս հարստությունը քոնն է: Իսկ քո ժողովրդի հետ ես հետո կխոսեմ:

– Թող լինի, ինչպես Գայլն է կամենում: Ես կվերցնեմ նվերները, բայց հիշիր, ես քեզ նախագգուշացրել եմ:

Մաքենզին նվերները հանձնեց նրան, չմոռանալով բարձրացնել հրացանի պահպանակը, և որպես վրադիր տվեց մի մետաքսյա կուրացուցիչ վառվռուն թաշկինակ: Այդ պահին ներս մտավ շամանը հինգ թե վեց երիտասարդ ռազմիկների ուղեկցությամբ, բայց Մաքենզին հանդգնությամբ մի կողմ հրեց նրանց ու դուրս եկավ վրանից:

– Պատրաստվիր,– ողջույնի փոխարեն հակիրճ ասաց նա Չարինկային, անցնելով նրա վիզվամի մոտով, և շտապով սկսեց շներին լծել:

Մի քանի րոպե անց նա ներկայացավ խորհուրդ, հետևից տանելով իր լծվածքը. աղջիկը քայլում էր նրա կողքով: Նա տեղ գրավեց դոփոփված հրապարակի վերին ծայրում, առաջնորդի կողքին: Նա Չարինկային ասաց, որ կանգնի իր ձախ կողմում, մի քայլ ետ, ինչպես և պատշաճ էր նրան: Ընդ որում, այն ժամանակ, երբ կարելի է չար բան սպասել, պետք է որևէ մեկը քեզ պահպանի թիկունքից:

Աջից ու ձախից կրակի վրա էին հակվել տղամարդիկ, նրանց ձայները միահյուսվել էին մի հնագույն, կիսամոռացված երգի մեջ: Չի կարելի ասել, թե գեղեցիկ էր այն, այդ երգը՝ կազմված հինավուրց, անսպասելի անցումներից, անակնկալ դադարներից, ձանձրալի կրկնություններից: Թերևս ավելի ճիշտ լինի այն անվանել սարսափելի: Հրապարակի հեռավոր ծայրում տասի չափ կանայք ծիսական պարով պտտվում էին շամանի առջև: Եվ շամանը զայրույթով հանդիմանում էր նրանց՝ ովքեր ոչ բավականաչափ ինքնամոռացությամբ էին անձնատուր լինում ծիսակատարությանը: Կանայք, կիսով չափ փաթաթված ագռավի թևի պես սև ու արձակ թափված մազերով, դանդաղ օրորվում էին, և նրանց մարմինները ճկվում էին՝ անընդհատ փոփոխվող ռիթմին հնագանդ:

Տարօրինակ տեսարան էր այդ, իսկական անաքրոնիզմ: Այնտեղ՝ Հարավում ավարտվելու վրա էր տասնիններորդ դարը, նրա վերջին տասնամյակի վերջին տարիներն էին անցնում, իսկ այստեղ ծաղկում էր նախնադարյան մարդը, նախապատմական քարանձավային բնակչի սովերը, հին ժամանակների չմոռացված բեկորը: Շիկահեր գամփռները նստել էին գազանի մորթի հագած իրենց տերերի կողքին կամ կռվում էին կրակի մոտ տեղ գրավելու համար, և խարույկի ցոլքերն էին խաղում նրանց արնակալած աչքերում, թաց ժանիքների վրա: Հեքիաթային ձյունածածկով պարուրված խուլ անտառը քնած էր խորունկ, շուրջը կատարվածի հանդեպ անտարբեր քնով: Սպիտակ Լռությունը, որ մի պահ շարտվել էր դեպի բնակատեղին շոջապատող թավուտները, ասես պատրաստվում էր նորից իրենով լցնելու ամեն ինչ. աստղերը դողդողում էին ու պարում երկնքում, ինչպես միշտ Մեծ Տրտի ժամանակ, և Բւեռային Ոգիները իրենց հրափայլ շորերն էին փռել երկնականարով մեկ:

Բիրյուկ Մաքենզին, աղոտ կերպով գիտակցելով այդ տեսարանի վայրի վեհությունը, հայացքը սահեցրեց մորթեղեն հագուստով անշարժ կեցվածքների շարքերի վրայով, նայելով, թե ով է բացակա: Մի ակնթարթ նրա աչքերը կանգ առան մի նորածին մանկիկի վրա, որը հանգիստ իր մոր բաց ստիքն էր ծծում: Ավելի քան յոթանասուն աստիճանի սառնամանիք էր: Մաքենզին մտածեց իր ժողովրդի քնքուշ կանանց մասին ու մռայլ ժպտաց: Եվ այնուամենայնիվ, ինքը, որին այդ քնքուշ մայրերից մեկն է ծնել, ժառանգել էր այն, ինչը իրեն և իր ազգակիցներին տալիս էր

իշխանությունն ցամաքի ու ծովի վրա, կենդանիների ու մարդկանց վրա՝ հողագնդի բոլոր մասերում: Մենակ՝ հարյուրի դեմ, արկտիկական ճմռան խորքերում, հարազատ վայրերից հեռու, նա զգում էր այդ ժառանգության կանչը՝ տիրելու կամք, խելացնոր սեր վտանգի հանդեպ, մարտական կիրք, հաղթելու կամ մեռնելու վճռականություն:

Երզն ու պարը դադարեցին, և շամանը սկսեց ճամբել: Հնդկացիների հարուստ դիցաբանությունից վերցրած բարդ ու խճողված օրինակներով նա հմտորեն ներգործում էր դյուրահավատ ունկնդիրների վրա: Նա խոսում էր ուժեղ ու համոզիչ: Խաղաղ ստեղծարար սկզբնավորության մարմնացմանը՝ Ագռավին, նա հակադրեց Մաքենգի Գայլին, նշավակելով նրան որպես ռազմատենչ ու կործանիչ սկզբնավորության մարմնացում: Այդ սկզբնավորությունների կռիվը միայն հոգևոր չէ: Կռվում են նաև մարդիկ՝ յուրաքանչյուրը հանուն իր տոտեմի⁵: Սթիքսերը Պրոմեթեոսի կրակատար Ջելկսի՝ Ագռավի զավակներն են, Մաքենգին՝ Գայլի, այլ խոսքով, սատանայի որդի է: Երկու սկզբնավորությունների այդ դարավոր կռիվը կատեցնելու փորձը, ցեղի դուստրերին երդվյալ թշնամուն կնություն տալը նշանակում է մեծագույն դավաճանություն և սրբապղծություն: Ամենախիստ խոսքերը, ամենանողկալի վիրավորանքներն անգամ չափազանց մեղմ են Մաքենգիի՝ թունավոր օձի, հենց սատանայի առաքյալի համար, որ նենգորեն փորձում է իրենց վստահությունը շահել: Այդ ժամանակ ունկնդիրները խուլ ու ահեղ մրթմրթացին, իսկ շամանը շարունակեց.

– Եղբայրներ իմ, Ջելկսը ամենագոր է: Նա չէ՞ր, որ երկնային կրակը երկիր բերեց, և մենք կարողացանք տաքանալ: Նա չէ՞ր, որ արևը, լուսինն ու աստղերը հանեց երկնախորշերից, ու մենք կարողացանք տեսնել: Նա չէ՞ր, որ մեզ սովորեցրեց կռվել Սովի ու Սառնամանիքի ոգիների դեմ: Իսկ այժմ Ջելկսը զայրացել է իր զավակների վրա, ու ցեղից մի խոճուկ բուռ է մնացել, և Ջելկսը նրանց չի օգնի: Որովհետև նրանք մոռացել են նրան, նրանք վատ են վարվում ու վատ ճանապարհով են գնում, և նրա թշնամիներին բերում են իրենց վիզվամներն ու նստեցնում իրենց օջախի մոտ: Եվ Ագռավը վշտանում է իր զավակների վատ վարք ու բարքի համար: Բայց երբ նրանք հասկանան իրենց անկման խորությունը և ապացուցեն, որ իրենք Ջելկսի գիրկն են վերադարձել, նա խավարից դուրս կգա նրանց օգնելու համար: Օ՛ եղբայրներ: Կրակաբերը իր կամքն է հաղորդել շամանին. հիմա այն լսեցեք դուք: Թող երիտասարդները աղջիկներին տանեն իրենց վիզվամները, իսկ իրենք հարձակվեն Գայլի վրա, ու թող նրանց ատելությունը չթուլանա: Այն ժամանակ կանայք երեխաներ կծնեն, և Ագռավի ժողովուրդը կշատանա ու կհզորանա: Եվ Ագռավը կաճեցնի նրանց Հյուսիսային հայրերի ու պապերի մեծ ցեղերը, և նրանք կկռվեն Գայլերի դեմ, մինչև որ ի չիք դարձնեն նրանց, դարձնեն անցյալ տարվա խարույկի մոխիր, իսկ իրենք նորից կդառնան ամբողջ երկրի տերը:

Ա՛յս է ասել Ջելկսը՝ Ագռավը:

Փրկչի մոտալուստ գալստյան այս լուրն անելով՝ սթիքսերը խռպոտ վայնասունով ոտքի ելան: Մաքենգին բուրթ մատները հանել էր թաթամաններից ու սպասում էր: Լսվեցին աղաղակներ՝ «Աղվե՛ս: Աղվե՛ս»: Դրանք ավելի ու ավելի բարձրագոչ էին դառնում: Ի վերջո երիտասարդ որսորդներից մեկն առաջ եկավ ու խոսեց.

– Եղբայրներ: Շամանը իմաստուն խոսքեր ասաց: Գայլերը խլում են մեր կանանց, և մեզ համար երեխա ծնող չի մնում: Մենք մի բուռ ենք մնացել: Գայլերը մեզից խլում են տաք մուշտակները և փոխարենը մեզ տալիս շի մեջ ապրող չար ոգի, և կուղբի կամ լուսանի մորթուց կարված հագուստի փոխարեն՝ խոտից պատրաստված հագուստ: Եվ այդ հագուստները տաք չեն պահում, ու մեր մարդիկ մեռնում են անհասկանալի հիվանդություններից: Ես՝ Աղվեսս, կին չունեմ: Իսկ ինչո՞ւ: Երկու անգամ էլ այն աղջիկները, որ դուր են եկել ինձ, զնացել են Գայլի բնակատեղին: Եվ հիմա էլ կուղբի, իշայծյամի, եղջերվի մորթիներ են կուտակել, որպեսզի Թինգ-Թինեի բարեհաճությունը նվաճեմ և կնության անեմ նրա աղջկան՝ Չարինկային: Եվ տեսե՛ք, նա դահուկներ է կապել և պատրաստ է ճանապարհ բացել Գայլի շների համար: Եվ ես միայն ինձ համար չեմ ասում: Նույնը կարող էր ասել Արջը: Նա նույնպես կամեցել է դառնալ Չարինկայի երեխաների հայրը և նույնպես շատ մորթիներ է պատրաստել Թինգ-Թինեիին տալու համար: Ես խոսում եմ այն բոլոր երիտասարդ որսորդների անունից, ովքեր կին չունեն: Գայլերը միշտ սոված են: Եվ նրանք միշտ էլ վերցնում են լավագույն պատառները, Ագռավներին թողնելով խոճուկ թերմացքներ:

⁵ Որևէ կենդանի, բույս կամ բնության որևէ տարր պատկերող նշան, որը ցեղի անդամները կրոնական պաշտամունք են դարձնում:

– Նայեցէ՛ք, ահա Գոկլան,– և Աղվեսը առանց քաշվելու մատնացույց արեց կանանցից մեկին. նա կաղ էր:– Նրա ոտքերը ծռվել են նավակի եզրերի նման: Նա չի կարող փայտ ու խռիվ հավաքել, չի կարող սպանված որսը քարշ տալ որսորդների հետևից: Գայլերը ուզե՛լ են նրան:

– Օ՛, օ՛,– գոռգոռացին Աղվեսի եղբայրակիցները:

– Ահա Մոյրին,– շարունակեց նա:– Չար ոգին ծռել է նրա աչքերը: Նույնիսկ ծծկերները վախենում են նրան նայելիս, և ասում են, որ արջն ինքն է նրան ճանապարհ տալիս: Գայլերը ուզե՛լ են նրան:

Եվ նորից հավանության ահեղ բվվոց:

– Ա՛յ, նստած է Պիսչեթը: Նա իմ խոսքերը չի լսում: Նա երբեք չի լսել ոչ ուրախ գրույց, ոչ իր ամուսնու ձայնը, ոչ էլ իր երեխայի թոթովանքը: Նա ապրում է Սպիտակ Լռության մեջ: Գայլերը նույնիսկ մի հայացք գցե՛լ են նրա վրա: Ո՛չ: Նրանց բաժին է ընկնում ընտիրը, իսկ մեզ մնացորդը: Եղբայրներ, այլևս այսպես չպետք է լինի: Բավական է Գայլերը վիստան մեր խարույկների շուրջը: Ժամը հասել է:

Հյուսիսափայլի վիթխարի հրապաստառը՝ բոսոր, կանաչ, դեղին բոցը, թրթռաց երկնքում, բռնելով այն ծայրից ծայր: Եվ Աղվեսը գլուխը ետ գցելով ու ձեռքերը դեպի երկինք կարկառելով, բացականչեց.

– Տեսե՛ք: Մեր նախահայրերի ոգիները ապստամբել են: Մեծ գործեր պիտի կատարվեն այս գիշեր:

Նա ետ գնաց, և մեկ ուրիշ երիտասարդ որսորդ, ընկերների դրդումով, անհամարձակ առաջ եկավ: Նա մի գլխով բարձր էր մյուսներից, լայն կուրծքը բաց էր, ասես ի հեճուկս սառնամանիքի: Նա մի ոտքից մյուսի վրա էր կանգնում, բառերը դուրս չէին գալիս բերանից, նա ամաչկոտ էր, անհամարձակ: Սարսափելի էր նրա դեմքին նայելը. ըստ երևույթին ինչ-որ ժամանակ ինչ-որ հրեշավոր ուժի հարված պատառոտել, այլանդակել էր այն: Վերջապես նա բռունցքը թնոյունով խփեց իր կրծքին, ասես թե թմբուկ էր զարկում, ու խոսեց. նրա ձայնը հնչում էր խուլ, ինչպես ավելոծության աղմուկը օվկիանոսի փին Գոնվոլո քարանձավում:

– Ես Արջն եմ, Արծաթե Նիզակը և Արծաթե Նիզակի որդին: Այն ժամանակ, երբ իմ ձայնը դեռ զրնգուն էր աղջկա ձայնի պես, ես լուսան, իշայծյամ ու եղջերու էի որսում. երբ այն հնչեց ինչպես կուղիս ճիչը թակարդում, ես կտրեցի անցա Հարավային Լեռները և Սպիտակ գետի ցեղից երեք հոգու սպանեցի, երբ այն Չինուկի մռնչուկի նմանվեց, ես հանդիպեցի գրիզի արջին ու փակեցի նրա ճանապարհը:

Նա դանդաղեց, ավիով բազմանշանակալից շփեց դեմքի ահավոր սպիները: Հետո շարունակեց.

– Ես Աղվեսը չեմ: Լեզուս սառել է գետի պես: Ես գեղեցիկ խոսել չգիտեմ: Բառապաշարս մեծ չէ: Աղվեսն ասում է՝ «Մեծ գործեր պիտի կատարվեն այս գիշեր»: Լա՛վ: Բառերը հոսում են նրա բերանից վարար գետի պես, բայց գործի մեջ նա այնքան էլ առատաձեռն չէ: Այսօր գիշեր ես կկռվեմ Գայլի հետ: Ես կսպանեմ նրան, և Չարինկան կնստի իմ օջախի մոտ: Ես՝ Արջս ասացի:

Իսկական դժոխքն էր մոլեգնում շուրջը, բայց Մաքենգին հաստատ էր իր վճռին: Լավ իմանալով, որ այդքան մոտ տարածության վրա հրացանն անօգուտ է, նա աննկատելիորեն առաջ բերեց գոտկից կախված երկու պատյանները, պատրաստվելով գործի դնել ատրճանակները, և թաթմաններն այնքան ցած իջեցրեց, որ այժմ դրանք կախված էին նրա մատներից: Նա գիտեր, որ եթե բոլորը միանգամից հարձակվեն իր վրա, ինքը ոչ մի բանի վրա հույս դնել չի կարող, բայց հավատարիմ մնալով քիչ առաջ ցուցաբերած իր պարծենկոտությանը, մտադրվել էր մեռնել՝ ծնոտները թշնամու կոկորդին սեղմած: Բայց Արջը զսպեց իր եղբայրակիցներին, ահավոր բռունցքի հարվածներով ետ մղեց ամենատաքարյուններին: Փոթորիկն սկսեց հանդարտվել, և Մաքենգին մի թռուցիկ հայացք գցեց Չարինկայի վրա: Դա մի հոյակապ տեսարան էր: Դահուկների վրա կանգնած՝ աղջիկն ամբողջ մարմնով թեքվել էր առաջ, շուրթերը կիսով չափ բացվել և ռունգները թրթռում էին. ճիշտ և ճիշտ էգ վագրը՝ ոստյունից առաջ: Սարսափ ու մարտահրավեր կար նրա սև ու խոշոր աչքերում, որոնք սևեռվել էին իր ցեղակիցների վրա: Նա ամբողջ մարմնով լարվել էր աղեղնալարի պես, շնչելն անգամ մոռացել էր: Նա արձանացել էր՝ մի ձեռքը ջղաձգորեն դրած կրծքին, մյուսի մեջ սեղմած երկար մտրակը: Բայց հենց որ Մաքենգին նայեց նրան, Չարինկային ասես թե ազատ արձակեցին: Լարված մկանները թուլացան, նա խոր շունչ քաշեց, ուղղվեց և նրան պատասխանեց անսահման նվիրվածությամբ լի հայացքով:

Թիխ-թիխեղ փորձեց խոսել, բայց նրա ձայնը խլացավ ընդհանուր գոռգոռոցի մեջ: Եվ այստեղ Մաքենգին առաջ եկավ: Աղվեսն ուզում էր բերանը բացել, բայց նույն պահին ետ շարվեց ու սուր ճիչը մնաց կոկորդում, այդ Մաքենգին կատաղությամբ շրջվեց դեպի նա: Աղվեսի

պարտությունը դիմավորեցին պոռթկացող հռիռոցներով. այժմ նրա ցեղակիցները պատրաստ էին լսելու:

– Եղբայրներ,– սկսեց Մաքենգին:– Սպիտակ մարդը, որին դուք Գայլ եք անվանում, ձեզ մոտ եկել է բաց սրտով: Նա չի ստի ինևուհոսի պես: Նա եկել է որպես բարեկամ, որպես մեկը, որն ուզում է ձեր եղբայրը դառնալ: Բայց ձեր տղամարդիկ իրենց խոսքն ասացին, ու խաղաղ գրույցների ժամանակն անցավ: Ուրեմն լսեցեք. ամենից առաջ ձեր շամանը չար շաղակրատ է և սուտ մարգարե, և այն կամքը, որ նա ձեզ հաղորդեց, Կրակաբերի կամքը չէ: Նրա ականջները խուլ են Ագռավի ձայնի հանդեպ, նա ինքն է հորինում խարդախ առասպելներ, նա ձեզ խաբել է: Նա անգոր է: Երբ դուք ստիպված էիք սպանել և ուտել ձեր շներին, ու ձեր ստամոքսը ծանրացել էր մոքասիհների հում կաշվից, երբ մեռնում էին ծերունիները, մեռնում էին պառավները, և ծծկերներն էին մեռնում մոր ցամաքած կրծքի վրա, երբ ձեր երկիրը պարուրված էր խավարով և ամեն մի կենդանի շունչ ոչնչանում էր, ինչպես սաղմոնը աշնանը, այո, երբ սովն իջավ ձեր գլխին, մի՞թե ձեր շամանը հաջողություն բերեց որսորդներին: Մի՞թե նա մտով լցրեց ձեր ստամոքսները: Նորից կասեմ ձեզ շամանն անգոր է: Ահա, ես թքում եմ նրա երեսին:

Բոլորն ապշել էին այդ սրբապղծությունից, բայց ոչ ոք ձայն չհանեց: Որոշ կանայք վախեցան, իսկ տղամարդիկ հուզմունքով հրաշքի էին սպասում: Բոլոր հայացքներն ուղղվեցին իրադարձության երկու գլխավոր հերոսների վրա: Զուրմը հասկացավ, որ հասել է վճռական պահը, զգաց, որ իր իշխանությունը երերում է, և արդեն պատրաստ էր սպառնալիքներ տեղալ, բայց միտքը փոխեց. Մաքենգին բռունցքը բարձրացրեց և փայլատակող աչքերով, կատաղած քայլեց դեպի նա: Շամանը չարախնդաց և ընկրկեց:

– Ի՞նչ, անակնկալ մա՞հը ինձ շքեցրեց: Շա՞նթը այրեց ինձ: Միգուցե աստղե՞ր ընկան երկնքից ու ճզվեցին ինձ: Թյու: Ես հաշիվներս մաքրեցի այդ շան հետ: Այժմ ես ձեզ կպատմեմ ցեղերից ամենահզորի՝ իմ ցեղի մասին, որը իշխում է բոլոր հողերում: Սկզբում մենք որս ենք անում մենակ, ինչպես ես: Հետո որս ենք անում երամներով և, վերջապես, ինչպես եղջերուների հոտերը, տարածվում ենք երկրով մեկ: Նրանք, որոնց մենք վերցնում ենք մեր վիզվամները, կենդանի են մնում, մնացածներին մահն է սպասում: Չարիական գեղեցիկ աղջիկ է, պնդակազմ և ուժեղ, նա Գայլերի լավ մայր կլինի: Դուք կարող եք ինձ սպանել, բայց, միևնույն է, նա Գայլերի մայր կլինի, որովհետև իմ եղբայրները անհամար են, և նրանք կգան իմ շների հետքով: Լսեցեք, ահա Գայլերի Օրենքը. եթե դու մի Գայլի կյանք խլես, դրա դիմաց քո ցեղից տասը հոգի իրենց կյանքը կվճարեն: Այդ գինն արդեն շատ հողերում են վճարել, շատ հողերում էլ այն դեռ վճարելու են:

Այժմ ես կխոսեմ Աղվեսի և Արջի հետ: Երևում է՝ նրանց դուր է եկել այդ աղջիկը: Ճի՞շտ է: Բայց, տեսեք, ես գնել եմ նրան: Թլինգ-Թինեհը հենվել է իմ հրացանի վրա, բացի այդ, աղջկա դիմաց տվել եմ ուրիշ ապրանքներ, որոնք այժմ նրա օջախում են: Բայց, այնուամենայնիվ, ես արդարամիտ կլինեմ երիտասարդ որսորդների նկատմամբ: Աղվեսին, որի լեզուն չորացել է երկար խոսելուց, ծխախոտ կտամ՝ հինգ մեծ տուփ: Թող նրա բերանը նորից թրջվի, որ նա կարողանա ուզածի չափ աղմկել խորհրդում: Իսկ Արջին,– ես հպարտ եմ նրա հետ ծանոթանալու համար,– կտամ երկու վերմակ, քսան աման ալյուր, կրկնակի շատ ծխախոտ, քան Աղվեսին: Իսկ եթե նա ինձ հետ գա դեպի Արևելյան Լեռները, ես հրացան էլ կտամ նրան, այնպիսին, ինչպիսին Թլինգ-Թինեհին է: Իսկ եթե նա չի ուզում: Լավ: Գայլը հոգնեց խոսելուց: Բայց նա մեկ անգամ էլ ձեզ կասի օրենքը՝ եթե դու մի Գայլի կյանք խլես, դրա դիմաց քո ցեղից տասը հոգի իրենց կյանքը կվճարեն:

Մաքենգին ժպտաց ու նորից կանգնեց իր նախկին տեղը, բայց նրա հոգին անհանգիստ էր: Գիշերը դեռ բոլորովին խավար էր: Աղջիկը կանգնել էր Մաքենգիի կողքին և աճապարանքով պատմում էր, թե Արջը ինչ հնարքներ է բանեցնում դանակով կռվելիս, և Մաքենգին ուշադիր լսում էր:

Ուրեմն, վճռված է. նրանք մենամարտելու են: Մի ականթարթում տասնյակ մոքասիհներ դոփոփելով ընդարձակեցին կրակի շուրջն ընկած հրապարակը: Այստեղ քիչ չէին նաև խոսակցությունները այն պարտության մասին, որ բոլորի աչքի առաջ կրեց շամանը: Ոմանք հավատացնում էին, թե նա դեռ ցույց կտա իր ուժը, մի քանիսն էլ վերհիշում էին անցյալի զանազան դեպքեր ու համաձայն էին Գայլի հետ: Արջը առաջ եկավ՝ ռուսական որսորդական մերկացված դանակը ձեռքին: Աղվեսն ընդհանուրի ուշադրությունը հրավիրեց Մաքենգիի ատրճանակների վրա, և սա, գոտին արձակելով, այն կապեց Չարիակայի մեջքին ու նրան հանձնեց հրացանը: Աղջիկը գլուխն օրորեց, հասկացնելով, թե կրակել չգիտե. կինը որտեղից իմանա, թե ինչպես պետք է վարվել այսքան թանկարժեք զենքի հետ:

– Այն ժամանակ, երբ վտանգ լինի թիկունքից, բարձրաձայն կանչիր՝ «Ամուսի՛նս»: Ոչ, այսպես՝ «Ամուսի՛նս»:

Նա ծիծաղեց, երբ Չարինկան կրկնեց անզվերեն անծանոթ բառը, կսմթեց նրա այտը ու վերադարձավ բոլորաշրջան: Արջը նրան գերազանցում էր ոչ միայն հասակով, նրա և՛ ձեռքերն էին երկար, և՛ դանակը՝ գրեթե երկու ոյույմով: Բիրյուկ Մաքենզին առաջներում ևս Նայել էր հակառակորդի աչքերի մեջ, և նա անմիջապես հասկացավ, որ իսկական տղամարդ է կանգնած իր առջև, այնուամենայնիվ, նա խիստ աշխուժացավ՝ տեսնելով փայլատակող պողպատը և, նախահայրերի կանչին հնազանդ, արյունն ավելի արագ հոսեց նրա երակներում:

Հակառակորդը նորից ու նորից նրան շարտում էր մերթ խարույկի մոտ, մերթ խոր ձյան մեջ, բայց նորից ու նորից, քայլ առ քայլ, հմուտ բռնցքամարտիկի պես, Մաքենզին նրան սեղմում էր դեպի կենտրոնը: Ոչ ոք հավանության ոչ մի խոսք չասաց նրան, այն դեպքում, երբ նրա հակառակորդին քաջալերում էին գովեստներով, խորհուրդ էին տալիս, նախազգուշացնում: Բայց Մաքենզին միայն ատամներն էր ամուր սեղմում, երբ դանակները զնգոցով կպչում էին իրար, և հարձակվում կամ նահանջում էր սառնասրտորեն, որը ծնվում էր սեփական ուժի գիտակցումից: Սկզբում նա ակամա համակրանք էր տածում հակառակորդի նկատմամբ, բայց այդ զգացումը չբացավ ինքնապահպանության բնագոյի հանդեպ, որը, իր հերթին, տեղը զիջեց սպանության տենչին: Քաղաքակրթության տասը հազար տարիները դուրս թռան Մաքենզիի միջից, և նա պարզապես դարձավ Էգի համար մարտնչող քարանձավային բնակիչ:

Նա երկու անգամ դանակը հասցրեց Արջին և անվսաս դուրս պրծավ, բայց երրորդ անգամ հարվածից խուսափելու համար նա ստիպված եղավ ամուր գրկել Արջին. յուրաքանչյուրը ազատ ձեռքով սեղմեց մյուսի՝ դանակով զինված ձեռքը: Եվ այստեղ Մաքենզին զգաց հակառակորդի ահավոր ուժը: Նրա մկանները տանջալից կծկվեցին, բոլոր կապաններն ու ջլերը պատրաստ էին պայթելու լարվածությունից... իսկ ռուսական պողպատի սուր սայրը ավելի ու ավելի էր մոտենում... Նա փորձեց պոկվել հակառակորդից, բայց միայն թուլացրեց իր դիրքը: Մորթեղեն հագուստով մարդկանց օղակը ավելի սեղմվեց. ոչ ոք չէր կասկածում, որ մոտ է վերջին հարվածը, և բոլորը անհամ բեր սպասում էին դրան: Բայց Մաքենզին փորձառու ըմբիշի պես դուրս պրծավ ու գլխով հարվածեց հակառակորդին: Արջն ակամա ետ-ետ գնաց, կորցրեց հավասարակշռությունը: Մաքենզին վայրկենաբար օգտվեց դրանից և, ամբողջ ծանրությամբ ընկնելով Արջի վրա, նրան շարտեց դիտողների շրջագծից դուրս, խոր, չտրորված ձյան մեջ: Արջը դժվարությամբ դուրս եկավ այնտեղից ու, նետվեց Մաքենզիի վրա:

– Օ՛ ամուսի՛նս, – զրնգաց Չարինկայի ձայնը՝ նախազգուշացնելով մոտալուտ վտանգի մասին:

Վնգաց աղեղնալարը, բայց Մաքենզին արդեն հասցրել էր կորանալ. ոսկրե ծայրակալով նետը, անցնելով նրա գլխավերևով, խրվեց Արջի կուրծքը, և նա ծանրորեն ընկավ, հակառակորդին սեղմելով իր տակ: Մի վայրկյան անց Մաքենզին նորից ոտքի վրա էր: Արջն ընկած էր անշարժ, բայց խարույկի մյուս կողմից շամանը պատրաստվում էր արձակելու երկրորդ նետը:

Մաքենզին բռնեց ծանր դանակի ծայրից ու թափով նետեց: Կայծակի պես փայլատակելով՝ դանակն անցավ խարույկի վրայով: Սուր սայրը մինչև կոթը խրվեց շամանի կոկորդը, նա օրորվեց ու փլվեց բոցկլտացող ածուխների վրա:

Չը՛խկ: Չըրը՛խկ, – Աղվեսը թռցրել էր Թլինգ-Թինեհի հրացանը և ապարդյուն փորձում էր փամփուռնուր դնել փողի մեջ, բայց Բիրյուկի հռչոցը լսելուն պես հրացանը ձեռքից ցած գցեց:

– Այդպես, ուրեմն, Աղվեսը դեռ չի սովորել վարվել այդ խաղալիքի հետ: Ուրեմն, Աղվեսը դեռևս կի՛ն է: Եկ այստեղ: Տուր հրացանը, ես քեզ ցույց կտամ, թե ինչ պետք է անել:

Աղվեսը տատանվում էր:

– Զեզ ասում եմ՝ այստեղ եկ:

Եվ Աղվեսը մոտեցավ ծեծված շան նման:

– Տե՛ս, մեկ... երկու... և ամեն ինչ կարգին է:

Փամփուռնուր սահեց իր տեղը, ձգանը ճրթաց, Մաքենզին հրացանը ուսը գցեց:

– Աղվեսն ասաց, որ մեծ գործեր են կատարվելու այս գիշեր, և նա ճիշտ էր ասում: Մեծ գործեր կատարվեցին, բայց դրանք Աղվեսը չկատարեց: Ի՞նչ է, նա դեռ մտադիր է Չարինկային իր վիզվա՛մը տանել: Նա ուզում է գնալ այն արահետով, որը բացել են շամանն ու Ա՛րջը: Ո՞չ: Լա՛վ:

Մաքենզին արհամարհանքով շրջվեց և իր դանակը դուրս քաշեց շամանի կոկորդից:

– Գուցե երիտասարդ որսորդներից մեկ ուրի՞շն է այդ բանն ուզում: Եթե այդպես է, Գայլը նրանց կուղարկի նույն ճանապարհով՝ երկու-երկու, երեք-երեք, մինչև որ ոչ մեկը չի մնա: Ոչ ոք չի՞ ուզում: Լավ: Թիկնգ-Թիկնեհ, այս հրացանը քեզ հանձնում եմ երկրորդ անգամ: Եթե երբևէ Յուքոն գնաս, իմացած եղիր, Գայլի տանը միշտ տեղ կունենաս օջախի կողքին ու բավականաչափ ուտելիք: Իսկ հիմա գիշերն անցնում է: Ես հեռանում եմ, բայց, հնարավոր է, որ Էլի վերադառնամ: Եվ վերջին անգամ ասում եմ՝ հիշեցեք Գայլի Օրենքը:

Նա մոտեցավ Չարինկային, իսկ ժողովուրդը նրան նայում էր որպես ինչ-որ գերբնական արարածի: Աղջիկը տեղ գրավեց լծվածքի առջևում, ու շները սլացան: Մի քանի րոպե անց հեքիաթային ձյունածածկ անտառը կլանեց նրանց: Եվ այն ժամանակ անշարժ կանգնած Մաքենգին նույնպես կապեց դահուկները՝ Չարինկայի հետքով շարժվելու համար:

– Մի՞թե Գայլը մոռացավ հինգ մեծ տուփ ծխախոտի մասին:

Մաքենգին զայրույթով շրջվեց դեպի Աղվեսը, բայց նույն պահին ծիծաղն եկավ:

– Ես քեզ մի փոքրիկ տուփ կտամ:

– Ինչպես որ հաճելի է Գայլին, – համեստորեն ասաց Աղվեսը և ձեռքը մեկնեց: